ԱՆԴՐԱՆԻԿ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

ԱԶԱՏԱԲԱՂՁՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՒԺԻ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ Ռ. ՋԱՐԴԱՐՅԱՆԻ ԱՐՁԱԿ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՈՒ ԼԵԳԵՆԴՆԵՐՈՒՄ

Զարդարյանի արձակի թեմատիկան շատ ընդգրկուն է և չի սահմանափակվում գավառական կյանքի արծարծումներով: Գրողը իր արձակ բանաստեղծություններում ու լեգենդներում փորձում է խորհրդապաշտական պատկերների և քնարական հերոսի գաղափարական ներշնչումներով նախանշել հայ ժողովրդի ազատության, փրկության ուղին:

Զարդարյանը պայքարի երգեր բաց տեքստով չէր կարող գրել ինչպես համիդյան բռնապետության, այնպես էլ երիտթուրքական կեղծ ժողովրդավարության տարիներին: Տրամաբանական է նաև, որ այդպիսի ստեղծագործություններ նա կարող էր լույս ընծայել կամ կեղծանվամբ, կամ էլ՝ գեղարվեստական մեթոդ ընտրելով սիմվոլիզմը: Փաստենք, որ արևմտահայության համար ծանրագույն շրջանում՝ 1905 թվականին, գրողը «Էժտահար» ծածկանվամբ Կ. Պոլսի «Շիրակ» հանդեսում լույս է տեսցնում «Եկեղեցիին առյուծը» նորավեպը (թեև ծավալով վիպակ է հիշեցնում), ուր հանձին տերտերի ակնհայտ անհանդուրժողականության և ըմբոստության կոչ է անում հայությանը: «Եկեղեցիին առյուծը» գաղափարական տեսանկյունից Զարդարյանի առաջին գործը չէ, սակայն արժեքավոր է այն բանով, որ արձակագիրը դրանում բացեիբաց ի դերև է հանում բոլորի ազատասիրական նկրտումները: Քահանան, փաստորեն, Զարդարյանի գաղափարակիր հերոսն է, ով զինված դիմադրություն է կազմակերպում թուրք ելուզակների դեմ ու վճռականորեն պատրաստ է զոհվելու: «Պիտի մեռնինք...»,- առանց տատանվելու պաշարված քահանան պատասխանում է զինակիցներից մեկի հարցին: Զարդարյանը տերտերին օժտել է նաև խորաթափանցությամբ ու հնարամտությամբ՝ դրանով էլ ավելի ընդգծելով վերջինիս գաղափարական լինելը: Գրողը, սակայն, տրամաբանական շարունակություն է գտնում նորավեպի համար: Նա, ինչպես և երկի գլխավոր հերոսը խորապես գիտակցում են, որ փոքրաթիվ ուժերով ցաքուցրիվ պայքարը, թեկուզև հերոսական, բաղձալի հաջողություն չի բերի: Այդ պատճառով էլ քահանան որոշում է զենքերը վայր դնել՝ հույս ունենալով այդ կերպ գոնե փրկել կանանց ու երեխաների կյանքը: Զարդարյանի այս ստեղծագործությու-

նը իրավամբ կարելի է զուգադրել Ռաֆֆու ծրագրային-քաղաքական վեպերի և Արփ. Արփիարյանի «Կարմիր ժամուց» վիպակի հետ: Ի՞նչ է հարկավոր իրականում, որ ազատասիրական կրակը բոցկլտա և հուրհրա բոլորի սրտերում, որ յուրաքանչյուրը հասկանա ու գիտակցի ազատության գինը: Զարդարյանի համոզմամբ՝ դրանց հասնելու համար հստակ երկու բան է անհրաժեշտ՝ բարձր, աննկուն ոգի և ուժի գիտակցում: Այս հիմնադրույթները Զարդարյանի մոտ կարգախոսից վերածում են մտածելակերպի, գաղափարախոսության:

Արձակ բանաստեղծություններում ու լեգենդներում Զարդարյանը բարձրաձայնում է իր համոզմունքները, հուժկու և ազդեցիկ խոսքերով կայծեր բորբոքում մարդկանց մեջ: Ընդհանրապես Զարդարյանը հիանալի է ըմբռնել հայ ժողովրդի կորուստների ու ողբերգությունների պատճառները. վերջինիս միշտ խանգարել է տարերայնորեն գործելը և ուժի գաղափարի բացակայությունը: Գրողը, սակայն, հմտորեն խորամուխ է եղել փաստերի հորձանուտը և այնտեղից վերհանել պատճառների պատճառը. ազգը բաղկացած է անհատներից, ուստի՝ բոլորն անխտիր պետք է ազատության իդեայի նվիրյալներ լինել՝ պատրաստ գիտակցված մահվան, որպեսզի պայքարի վերջնարդյունքը հաղթական լինի: Զարդարյանի համար առասպել է մի քանի անհատների անձնազոհության գնով հաջողության հասնելը: Մի շարք արձակ քերթվածներում և լեգենդներում կարմիր թելի նման գծագրվում են Զարդարյանի ուղենշային գաղափարները: «Նախատի՞նք անոնց, որ հառաջապահ դրոշակակիրներուն վիրավոր անկումեն օգտվելով՝ գլխիկոր ծունկի կուգան ազատության ճամփուն վրա և դյուցազներուն փառքը սակարկելով՝ իրենց ողորմելի գոյությունը ապահովել կջանան. ո՛չ, կաղաղակենք մենք մեր բոլոր ուժով, ո՛չ, թող չենք տար. և եթե մեր բռունցքները անզոր են ու մեր կամքերը լուծի տակ, օ՜հ, կբարձրանանք կախաղան և մահվան բարձունքեն մեր արյունոտ շղթաները իբրև երկնային վրեժխնդրություն՝ կնետենք ձեր և դուշմանին մեջտեղը, գերեվաճառության շուկան դարձյալ փառքի տաճարի փոխելով»,[1]- այդպես են տրամադրված թուրքական բանտում գտնվող ըմբոստ հոգիները («Պահակները արթուն են»):

«Կայծերը» արձակ բանաստեղծության մեջ Զարդարյանի հերոսը գաղափարը կայծերի տեսքով տարածողն է, ով վստահաբար գտնում է, որ արդարության ու ճշմարտության ճանապարհը հենց դրանով է պայմանավորված. «Տե՛ս այն շավիղը, ուրկե ես անցած եմ բզկտվելով, բայց ստեղծագործելով,- ըսավ վիուկը,- պիտի առաջնորդեմ քեզի ու դուն պիտի սերմանես կայծերը և պիտի հասուննա կրակի ու հրդեհի հունձքը: Հունձքը, ա՜հ, այո՛, հունձքը, որ պիտի ոռոգենք մեր արյունով՝ որպեսզի կարմիր ծաղիկները կյանքի իրա-

1 **Ռուբեն Զարդարյան**, Ցայգալույս, Երևան, 1959, էջ 342: Այսուհետ այս գրքից կատարվող մեջբերումների համապատասխան էջը կնշվի տեքստում:

կանությունը արգասավորեն...» (էջ 347-348): Տեղին է նշել, որ այս ստեղծագործությունը էությամբ և բովանդակությամբ հիշեցնում է Ռաֆֆու «Կայծեր» վեպը՝ այն տարբերությամբ, որ մեծ վիպասանի հերոսները թե՛ կայծեր են բորբոքում, և թե՛ գործնական քայլեր ձեռնարկում:

Արձանագրենք, որ «կրակ», «խարույկ», «հրդեհ» կամ «հրդեհի հունձք» բառերը Զարդարյանի համար ինքնանպատակ չեն և դրսևորվում են իբրև գաղափարանիշ արտահայտչամիջոցներ: Կրակը կամ հրդեհը Զարդարյանը դիտում է ոչ միայն ազատագրական պայքարի խորհրդանիշ, այլև հին կյանքը մերժող ու նորը մարմնավորող պաշտամունքային երևույթ: «Ուխտած ենք կրակով հատուցանել այն պարտքը, որ թշնամին համայնատարած հրդեհով ու մոխիրով փոխ տվավ մեզի: ...Ու մենք տենդահար ձեռքերով կվառենք խարույկը, մինչև որ անոր բոսորագույն լույսը ծառագայթե բոլոր մութ հոգիներեն ներս, մինչև որ ազատության վերջին զոհին մարմինը ծենծերի փրկության տաճարին առջև: ...Դարերու նախատինքն ու ամոթն է, որ կհրդեհենք» («Բագինին փառաբանությունը», էջ 338): Զարդարյանի այս երկի հերոսը առավել քան համոզված է, որ խարույկի բոցերը կջերմացնեն բոլոր արիների ու անարիների հոգիները և հաստատակամ կդարձնեն նրանց. «Բարձրագլուխ ու անհողդողդ՝ կանգնած ենք մահվան դեմ՝ մեր ահավոր ցավին հետ, որ մեր փառքն է միանգամայն, և հպարտությունն ունինք պատմությանն ավանդելու դյուցազնությանց ամենեն սխրալին, հպարտությունն ունինք հետագա դեռ տառապող մարդկության փոխանցելու ազատության ամենեն հզոր սարսուռները» (էջ 339):

«Ով որ Սուլթան մը ունի իր հոգիին մեջ» լեգենդում Զարդարյանը հասնում է փիլիսոփայական եզրահանգման. հերոսը՝ Իրանի Վուալե Սինա բանաստեղծը, երկրեերկիր դեգերելով, գտել է մարդկության թշվառության ու խեղճության պատճառը. «Զարհուրանքո՜վ տեսա, թե սրտերը իշխաններ, և հոգիները արքաներ չունեին» (էջ 238): Բանաստեղծի կարծիքով՝ գահազուրկ են այն մարդկային հոգիները, որոնք տկար են, վեհերոտ, ըմբոստանալու ու պայքարելու անընդունակ: Այդպիսի հոգիները դատապարտված են հավիտենական հալածանքի, հպատակության: Վուալե Սինա բանաստեղծը մարդկային կյանքի ամենամեծ դժբախտությունը համարում է ստրկամտությունը և մահկանացուներին է կտակում իր վերջին խորհուրդը. «Մինչև որ ամեն մարդ ամեն ժողովուրդի մեջ՝ իր սրտին վերանորոգված ապարանքին դռներուն առջև, օրվան բոլոր ժամերուն նոր թագավորի մը դուրս ելլալուն չսպասե, երկրպագելու համար անոր նորոգ փառքին ու նորոգ շքեղությանը, բոլոր հոգիները պիտի մնան հավիտենապես գթության արժանի, և բոլոր ազգերը հավիտենապես դժբախտ, որքան էլ երկիրները իշխաններ ունենան, և պետությունները՝ ինքնակալ» (էջ 239): Որքան վեհանձն, խիզախ լինեն անհատները, այնքան հզոր

կլինի ազգը: Չի կարող լինել զորեղ ու բարձր գաղափարներով օժտված ազգ, ժողովուրդ՝ առանց դրանք կրող անհատների. սա է այս հրաշագեղ երկի փիլիսոփայությունը:

Զարդարյանը բավականին հստակ նկատել է մեր ազգի ազատասիրական ձգտումները խոչընդոտող ևս մեկ հույժ կարևոր երևույթ. դա հային ներհատուկ դյուրահավատությունն է և օտարների հետ հույսեր կապելը: Լավատեղյակ լինելով մեր պատմությանն ու նրա բախտորոշ անցքերին՝ Զարդարյանի պես մտավորականը վաղուց էր միֆ համարում եվրոպական խոշոր տերությունների միջոցով հայկական հարցի լուծումը: Հասկանալի պատճառներով գրողը այդ միֆի պսակազերծումը իրականացնում էր բնապատկերների, կենդանիների և բնության ձայների շնչավորում-անձնավորմամբ: «Գամփռը», «Մենավոր ծառը», «Լեռան եղնիկին» արձակ բանաստեղծությունները սիմվոլիստական գործեր են: Թե՛ գամփռը, թե՛ ծառը, թե՛ եղնիկը կերպավորում են ազատատենչ Հայաստանը, հայ ազգին: Երեքն էլ վեր են կանգնած այն գորշ իրականությունից, ուր ճնշվում են միտքն ու հոգին, ուր թագավորում է վեհերոտությունը, նենգությունը, թուլակամությունը, փոքրոգությունը: Գամփռը աննկուն հայն է, ով երբեք չի ընկրկել դժվարությունների առաջ, ըմբոստ ու արհամարհական կեցվածքը հառած քաղքենի վայրահաչ ու ցեխոտ շներին՝ բռնում է տունդարձի ճամփան՝ ապրելու ու մեռնելու արժանավայել. «...լավ է անոթի մեռնիլ՝ քան թե երկու թաթերը երկնցնել՝ կուրծքը ցեխին քսել քաղաքի ծակաչք մարդեն կտոր մը հաց խնդրելու. լավ է կատաղի անհավասար կռվի մը մեջ երիտասարդ գայլի մը հետ ճակատ ճակատի գալ ու մեռնիլ վիրալից՝ քան թե փողոցի մը մեկ անկյունը ոգեվարիլ ու իբր նվաստ, արհամարհված կենդանի ավարտել քեզի տրված կյանքի բաժինը» (էջ 245): «Գամփռը» երկի շուրջ ձևավորված հիացական կարծիքները մի կողմ թողնելով՝ ուզում ենք մեջբերել խիստ բացասական, ավելի ստույգ՝ ջախջախիչ մի մեկնություն, որը մեծ աղմուկ է հանել ժամանակին և նորովի դիտարկման կարիք ունի: Խոսքը վերաբերում է Շահան Շահնուրի «Ավուր հացի կարոտ» հրապարակմանը: Նա նախ պսակազերծում է հայ գրականությունը՝ գտնելով, թե այն զուրկ է մտքից ու տրամաբանությունից: Որպես իր արտահայտածի ապացույց Շահնուրը վկայակոչում է Զարդարյանի «Գամփռը»: Քննադատության թիրախ դարձնելով գրողի «Ցայգալույս» ժողովածուն ընդհանրապես՝ Շահնուրը Զարդարյանի այսպես կոչված՝ «միջակությունը» ի ցույց դնելու համար մատնանշում է «Գամփռի»՝ իր կարծիքով խոցելի կետերը: Քննադատի ժխտողական վերաբերմունքը ծնվել էր շան խորհրդապատկերման զարդարյանական ձևից: Ըստ Շահնուրի մեկնակետի՝ գամփռի կերպարում մարմնավորված է դաշնակցական անհատը, որին հալածում են ստրկամիտ, գաղափարազուրկ քոթոթները: Շահնուրը Զարդարյանին մեղադրում է մի շարք հարցերում: Նրա

կարծիքով՝ արձակագիրը սկզբից մինչև վերջ գամփռին վերագրում է մարդկային հատկանիշներ, ինչը արվեստում անթույլատրելի է: Դատապարտելի է համարում թեման բացեիբաց չներկայացնելը: Իսկ ամենանշավակելին, Շահնուրի դիտարկմամբ, Զարդարյանի երկում մտքի և տրամաբանության աղճատվածությունն է, տկարությունը, անհստակությունը. «Ան իր գամփռին կը պատվիրե կրկին լեռ բարձրանալ «և անհավասար կռիվի մը մեջ երիտասարդ գայլի մը հետ ճակատ ճակատի գալ և մեռնիլ վիրալից»: Ուրեմն ըստ Զարդարյանի Դաշնակը ոչինչ ունի «անելիք» ի նպաստ կյանքին: Անկարող է կյանքը գեղեցկացնելու, բարելավելու, փրկելու: Ան պետք է որ «անհավասար կռիվ» փնտռե: Փոխանակ հաղթանակի, պետք է վիրալից և գեղեցկատիպ մահը որոնե: Մեռի՛ր կ՚ըսե իր հզո՛ր մտավորականին, անսահման անգիտակցությամբ»[1]: Զերծ մնալով կողմնակալ վերաբերմունքից՝ փորձենք որոշ տեսակետներ հայտնել՝ շահնուրյան մեկնաբանությունների հետ կապված: Նախևառաջ արձանագրենք, որ Շահնուրի վերլուծության եզրակետը՝ գամփռին իբրև գյուղից քաղաք եկած դաշնակցականի ներկայացնելը, անընդունելի է: Եթե Զարդարյանը դաշնակցական գործիչ էր, սա անպայմանորեն չի ենթադրում, որ պետք է հերոսը այդ կուսակցության ներկայացուցիչ լինի: Մյուս կողմից՝ Զարդարյանը երբեք, ոչ մի առիթով, ոչ մի ստեղծագործության մեջ դաշնակցականի չի կերպավորել, քանի որ նրա գիտակցական մակարդակը թույլ չէր տա գեղարվեստը մղել կուսակցականացման, հետո՝ ազատագրության գաղափարը դաշնակցականների մենաշնորհը չէ: Եթե խնդրին մոտենանք շահնուրյան դիտանկյունից, թե գամփռը ազատախոհ դաշնակցական մտավորականն է, այդ դեպքում մի շարք հարցեր են առաջանում՝ ովքե՞ր են քոթոթները, ո՞վ է այդ մեծ շան զավակը, գայլի կերպարով հանդես եկող թշնամու դեմ արդյո՞ք միայն դաշնակցականն է պայքարում: Այս հարցերի պատասխանները դժվար է ակնկալել: Ինչ վերաբերում է Շահնուրի նշած գաղափարապաշտ անհատի, գերմարդու ստեղծման զարդարյանական անհաջող ճիգերին, նկատենք, թե այդ կարծիքը միանշանակ մերժելի չէ, ինչի համար հիմք է տալիս «Ով որ Սուլթան մը ունի իր հոգիին մեջ» երկը:

Մենավոր ծառը նույնպես խորհրդանիշ կերպար է՝ միայնակ մնացած Հայաստանը, որ դարերով կռիվ տալով՝ մնացել է աննվաճ ու աննահանջ. «Իր քույրերը, վայրի խոտ, վայրի ծաղիկ, վայրի անանուխ, ամենն ալ իրեն պես. հանդիպող ոևէ հասարակ ոտք չի կոխեր զիրենք, ոչ ալ պատահական ամեն անցորդ կհաճոյանա իրենց գեղեցկութենեն ու ձեռք կնետե անոր. մյուսները, պարտեզներուն, հասարակաց դաշտերուն վրա ծաղկողները դյուրամատչելի, դյուրագին ցնծուհիներ են, հաճոյակատար, անձնամատույց՝ որոնց բույրը

1 «Ապագա», Փարիզ, 1936, 18-19 ապրիլ:

բորոտ ռնգունք մը անգամ կրնա կողոպտել և գառնուկի շրթունք մը անոնց փափկությունը բռնաբարել» (էջ 298): Զարդարյանը վստահ է, որ խրոխտ ու անսասան այդ մենավոր ծառը, առանձնացված անպետք ցախերից, փափկակյաց թփերից, երբեք չի երկնչել հզորաշունչ ամպրոպից, հրդեհածին կայծակից, կործանարար քամիներից, մոտ է լուսաշող ապագային:

Ազատ կյանքի, անկախության, գեղեցկի և այլ բարձրագույն իդեալների խտացում է «Լեռան եղնիկին» արձակ քերթվածը: Եղնիկը՝ բնության ամենաքնքուշ ու վախվորած, բայց միշտ հաղթական թռիչքներով, ազատ կյանքի սովոր այդ էակը, ուզում է միայն խաղաղ ու երջանիկ օրեր ապրել՝ ոչ ոքի վնաս ու ցավ չպատճառելով: Բայց անմեղ կենդանուն շարունակ հալածում են որսորդները, ովքեր սպանում են թե՛ գեղեցիկը, թե՛ ազատությունը: Ինչ էլ որ լինի եղնիկը նախընտրում է անկոխ բարձունքները կամ արժանապատիվ մահը: «Բնությունը չի կրնար քնացնել քու զգացմունքներդ, չի փոխարիներ զանոնք, որովհետև սորված չես հեզաբարո ու գոհունակ ոչխարին, մութ ու թաց ախոռի եզան, գոմեշին նման պղտոր առուներե, տղմուտ ճախիններեն ծարավդ անցընել հարկ եղած ատեն, որովհետև քու անհանդարտ տրամադրություններդ, քու ազնվական վեսություններդ ոչ մեկ գնով ալ չեն կապվիր մարդկային եսական քմահաճույքներուն, անձնասեր պահանջներուն» (էջ 304): Զարդարյանը ստեղծագործական հետաքրքիր հնար է կիրառում՝ դիմելով Հայաստանի խորհրդապատկեր եղնիկին: Նա, եղնիկի ազատաբաղձական նկրտումներն արտահայտելուց բացի, կենդանուն հորդորում է չգայթակղվել օտար հրապույրներից ու հմայքներից. «...Ո՜չ, վար միջներ քու որջեդ՝ ինչքան ալ գեղեցիկ հագվին կապվին դաշտերն ու ծործորները, պարտեզներն ու արոտավայրերը ապրիլի այս զմայլելի առավոտներուն, որքան ալ ճյունապատ ըլլա դեռ քու ծննդավայրդ: Թող այս գեղածիծաղ ու պչրալից երևույթներուն պատրանքը չփորձե քու միամտությունդ, դուն կեցի՛ր ամպերուն մոտ, երկնքին ջինջ կապույտին մոտ, դաշտերեն վեր, տափարակ տարածություններեն վեր, միշտ անընտել, միշտ խրտչան ու անհնազանդ...» (էջ 305):

Բոլոր երեք արձակ բանաստեղծություններում էլ Զարդարյանը դրոշի պես ծածանում է իր՝ մտավորական գրողի, քաղաքական գործչի անխախտ գաղափարական գիծը՝ համախմբված ընթանալ ազատության ուղիով՝ ապավինելով միմիայն սեփական ներուժին: Ուշագրավ է մի իրողություն ևս. երևակայական թշնամին՝ որսորդը՝ եղնիկի վրա զենք գործածողը, դատապարտված է կորստյան: Նույն այս ենթիմաստը ուրվագծվում է Զարդարյանի «Զարնված որսորդը» հեքիաթում՝ մի տարբերությամբ միայն, այնտեղ խորհրդանիշ հերոսը այծյամն է, և որսորդը վախճանվում է. «Վա՜յ անոր, որ այծյամին նշան կբռնե» (էջ 174):

Իհարկե, Զարդարյանը չէր սահմանափակվում սոսկ ազգային գաղափարների քողարկված կամ բացահայտ վերհանմամբ և դրանց արտացոլմամբ. նրա հայեցակետի համաձայն՝ ազգերի ու երկրների խաղաղ գոյակցության և բարգավաճման համար անհրաժեշտ է վեհանձնություն և խղճմտանք: Այդ նպատակին գրողը ծառայեցրել է երկու ստեղծագործություն՝ «Բռնավորին արցունքը» և «Տեմիր-Ղայա»: Զարդարյանը թափանցել է պատերազմների և ամեն տեսակ կռիվների խորքը: Ինչպես վկայում են վերը հիշատակված երկերը, սպանությունների, մարտերի, նախճիրների ծնունդն են մարդկային խղճի չգոյության, պակասի:

Տեմիր-Ղայան՝ համանուն երկի հերոսը, մի ավազակապետ է, ով իր խմբով կողոպտում, թալանում է մարդկանց: Սակայն դիպվածը նրան մղում է մաքրագործման. մահամերձ ավազակապետը Աստծո կամքով բարեգործությամբ հատուցում է մեղքերի դիմաց: Քսանամյա մարդասիրական առաքելությունը չի մեղմում Բարձրյալի զայրույթը: Տեմիր-Ղայան մաքրվում է միայն այն ժամանակ, երբ մի դավաճանի զրկում է կյանքից: Այս լեգենդի խորհուրդն այն է, որ Զարդարյանը առաջ է քաշում համամարդկային գաղափար՝ ենթատեքստում ունենալով ազգայինը: Յուրաքանչյուրը պետք է ապրի այն վեհ գիտակցմամբ, որ անմեղներից կյանք խլելը ծանրագույն հանցագործություն է, իսկ եթե հեղվում է արյունը մարդասպան-ազգադավի, ապա արդարացվում է: Այսինքն՝ Զարդարյանը ներքուստ իր ազգին կոչ է անում զենք վերցնել ու ոչնչացնել կեղեքիչներին, զավթիչներին ու դավադիրներին:

Անիրականի ու իրականի յուրատեսակ հակակշռով լեցուն գործ է «Բռնավորին արցունքը» լեգենդը: Մի կողմում Նաբուգոդոնոսոր բռնակալ արքան է, ով փորձում է ամեն գնով դադարեցնել անմեղ զոհ Զաքարիա քահանայի արյունը, մյուս կողմում՝ իրական աշխարհն է նույնքան իրական ու անխիղճ բռնակալներով: Զարդարյանն իր բռնավոր հերոսին մղում է զղջման, ով բազմաթիվ մարդկանց սպանելով է փորձում լռեցնել մշտահոս արյունը. «Վա՜յ ինձի, վա՜յ ինձի, եթե այսքան մարդ տանջանքի պետք է ենթարկվի մեկ մարդու մը արյունին համար, ի՞նչ պիտի ըլլա հապա իմ վիճակս՝ որ տասը հազար մարդկային արարածներու արյունը թափեցի» (էջ 218),- բացականչում է Նաբուգոդոնոսորը «զգաստության ու խղճահարության հազվադեպ վայրկյանի մը մեջ» և իր արցունքներով է կանգնեցնում արյան հոսքը: Եթե հիշյալ արքան և մյուս բռնակալները ունենային ապաշխարհության և խղճմտանքի վայրկյաններ, այսինքն՝ եթե նրանց մեջ մի քանի ակնթարթ գազանի փոխարեն լիներ մարդը, ապա արյան լճակներ չէին գոյանա: «Բայց այդ արցունքը չէ՛ կաթած երբեք պատմության մեջ և չի՛ կաթեր երբեք» (էջ 219),- վատատեսական վերջաբանով ավարտում է Զարդարյանը: Գրողը երևութական աշխարհից նրբորեն անցնում է իրականության, որը պարտադրում է իր օրենքները, քանի որ

մարդը դեռ հեռու է մարդ կոչվելուց, շարժվում է վայրենու բնազդներով. «Ահա թե ինչու համար վշտակիր մարդկության տառապանքն ու արյունը՝ իբրև նախատինք ու վրեժխնդրություն պիտի շարունակեն պղպջալ ու վրեժ ժայթքել միշտ բռնավորներու պալատներուն սեմին վրա և բազմատեսակ բռնությանց ընդդեմ, մինչև որ ընկերական արդարության ու ազատության մեծ գաղափարը գա վերջ դնելու մարդկային ստրկության և շահագործության, խնայելով բռնավորներուն պղնձե աչքերը՝ կարեկցության արցունքները, և թշվառ մարդկությունը իր ծով արյունեն» (էջ 219):

Զարդարյանի ամենամեծ երազանքը մարդկանց հավերժական երթին ականատես լինելն է, նրանց մշտազվարթ ու երջանիկ տեսնելը: